19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 63 -Ն «24» Նոյեմբերի 2022

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի 10-րդ դասարանի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

11/24/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2022 թվականի նոյեմբեր 24-ի N 63 Ն հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՐԱԳԻՐ

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԹԵՄԱ 1
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ
Հիմնական նպատակը
Ձևավորել՝

1. - պատկերացումներ նոր զինատեսակների կիրառման, ռազմավարական և մարտավարական ճակատամարտի ելքերի վերաբերյալ,
2. -կարևորել ազգի նվիրյալների, զինված պայքարի դերը ազգի և երկրի պաշտպանության գործում:

Վերջնարդյունքներ

1.*Նկարագրի* հայկական բանակի ռազմավարությունն ու մարտավարությունը պատմության համատեքստում:
2. *Կատարի* պատմական դասերի քարտեզագրում:
3.*Արժևորի* ազատագրական պայքարի նվիրյալներին:
4. *Հայտնի դիրքորոշում* պատմական կարևոր իրադարձությունների և գործիչների մասին:

Բովանդակություն

1. 17-րդ դարում Սյունիքի ազատագրական պայքարը: Դավիթ բեկի և նրա զինակիցների ռազմավարությունն ու մարտավարությունը: Ֆիդայական շարժումը: Անդրանիկ զորավարի մարտավարությունը:
3.1-ին աշխարհամարտը: Կամավորական շարժումը: Հայկական լեգեոնը:
4.Հայկական բանակը 1918–1920 թթ.: Մայիսյան հերոսամարտերը:Լեռնահայաստանի ազատագրական պայքարը՝ Գարեգին Նժդեհի մարտավարությունը:

Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Ինքնուրույն (խմբով) համացանցի միջոցով ուսումնասիրում են տվյալ ժամանակաշրջանում կիրառված զինատեսակները, դրանց ռազմավարական և մարտավարական մտահղացումների ազդեցությունը ճակատամարտի ելքի վրա: Համակարգում և դասարանին են ներկայացնում ազգի նվիրյալների դերը՝ երկրի պաշտպանության և ազատագրական պայքարի գործում:	**Անհատ և հարաբերություններ** Ռազմագետներ (հռչակավոր զորավարներ)՝ հայրենասիրական ոգի, կատարած սխրանքներ: **Ժամանակ և տարածություն** Հին դարաշրջանից՝ մեր օրեր:

Միջառարկայական կապեր

Ինֆորմատիկա: Համակարգիչ և համացանցի տեղեկատվական հենքեր, սահիկաշարեր:
Ռուսերեն (այլ օտար լեզու): Ուսումնասիրվող նյութի մասին օտար լեզվով տեղեկություն:
Հայոց լեզու: Ռազմական եզրույթների հայերեն համարժեքներ:
Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն: Հին և միջին դարերի պատմություն, ռազմագետներ (հռչակավոր զորավարներ):

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ

Մ1, Մ7, Մ14, Մ15, Մ16, Մ17, Մ18, Մ23, Մ24, Մ36

ԹԵՄԱ 2

ԶԻՆՎՈՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐՏԻ ԴԱՇՏՈՒՄ

Հիմնական նպատակը

Ապահովել մարտի դաշտում զինվորի հիմնական գործողությունների կատարումը՝ հարձակման ժամանակ, պաշտպանությունում, դետքում, դիտակետում:

Նպաստել մարտի դաշտում զինվորի տեղաշարժվելու, դիրքավորվելու, քողարկվելու, դիտարկում իրականացնելու ճիշտ կատարմանը:	
Վերջնարդյունքներ	
1.*Ընտրի* ճիշտ կրակային կամ դիտարկման դիրք. դիրքավորվի, քողարկվի, դիտարկի հակառակորդին (դպրոցում, հարակից տարածքում): 2. Քողարկված *տեղաշարժվի* մարտի դաշտում (դպրոցում, հարակից տարածքում):	
Բովանդակություն	
1.Զինվորը պաշտպանությունում: 2.Զինվորը հարձակման ժամանակ: 3.Զինվորը դետքում: Զինվորը որպես դիտորդ:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Համացանցի միջոցով ուսումնասիրում են տեսաֆիլմեր «Զինվորի գործողությունը մարտի դաշտում» թեմայի վերաբերյալ: Կատարում են գործողություններ՝ 1. - պաշտպանությունում, 2. - հարձակման ժամանակ, **3.** - դիտորդի դերում և դետքում:	**Համակարգ և մոդել** ՀՀԶՈՒ որպես համակարգ՝ իր ենթակառուցվածքներով /ջոկ, դասակ, վաշտ և այլն/ **Կառուցվածք և գործառույթ** Զինվորի գործողությունների փոփոխությունը հանգեցնում է կառուցվածքային փոփոխությունների. 1. պաշտպանությունում, 2. հարձակման ժամանակ, **3.** - դիտորդի դերում և դետքում:
Միջառարկայական կապեր	
Ինֆորմատիկա: Համակարգիչ և համացանցի տեղեկատվական հենքեր, սահիկաշարեր: **Ռուսերեն (այլ օտար լեզու):** Ուսումնասիրվող նյութի մասին օտար լեզվով տեղեկություն: **Հայոց լեզու:** Ռազմական եզրույթների հայերեն համարժեքներ: **Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն:** Պատերազմների ժամանակ մարտի վարման եղանակները, դրանց առանձնահատկությունները և ռազմական գործիչներ (հռչակավոր զորավարներ): **Ֆիզկուլտուրա:** Դիրք:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ2, Մ12, Մ15, Մ31, Մ33, Մ45	
ԹԵՄԱ 3	
ԶԻՆՎՈՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԸ ՄԱՐՏԻ ԴԱՇՏՈՒՄ	
Հիմնական նպատակը	

Ձևավորել՝ 1. - պատկերացումներ մարտական իրավիճակում հմտորեն, արագ կրակային դիրքի փոփոխման, քողարկված տեղաշարժման վերաբերյալ՝ ապահովելով սեփական անվտանգությունը և մարտական առաջադրանքի հաջող կատարումը: **2.** - պատկերացումներ հրաձգության մի դիրքավորումից հմտորեն մյուսին անցնելու վերաբերյալ ՝ կախված մարտական իրավիճակից:	
Վերջնարդյունքներ	
1. Գլորումով *փոխի կրակային դիրքը.* դեպի կողք (աջ և ձախ) : 2. *Փոխի կրակային դիրքը*. հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում՝ սողեսող: 3. Անաղմուկ քայլերով *տեղաշարժվի* առաջ (հետ, աջ և ձախ):	
Բովանդակություն	
1.Հրաձգության դիրքի փոփոխումը՝ գլորումով դեպի կողք: Քողարկված՝ սողեսող տեղաշարժը մարտի դաշտում: 2. Ձբաղեցրած դիրքից քայլերով քողարկված և անաղմուկ տեղաշարժը (առաջ, հետ, աջ և ձախ):	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Համացանցի միջոցով ինքնուրույն (խմբով) ուսումնասիրում են համապատասխան տեսադասերը: Քողարկված՝ սողեսող տեղաշարժվում են 10-ական մետր:Կատարում են դեպի կողք գլորումներ: Տեղանքում՝ չոր ճյուղերի (նմանակման միջոցների օգտագործմամբ) պայմաններում փորձում են անաղմուկ քայլերով անցնել 20 մետր տարածություն (առաջ, հետ, աջ և ձախ):	**Ժամանակ և տարածություն** Տեղաշարժ տեղանքում (ժամանակով և տարածությամբ պայմանավորված):
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Ռազմական եզրույթների հայերեն համարժեքներ: **Ֆիզկուլտուրա:** Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկունություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա: Նախավարժանք, շնչառական վարժանքներ: **Կենսաբանություն:** Մարմնի անատոմիա՝ հենաշարժիչ, մկանաջլային, շնչառական համակարգեր, հավասարկշռության և շարժումների կոորդինացիայի կենտրոններ (ներքին ականջ, ուղեղիկ): **Ֆիզիկա:** Հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա: Կայունություն, ծանրության կենտրոն: Իներցիա: Պտտական շարժում:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ1, Մ6, Մ14, Մ15, Մ25, Մ33, Մ38, Մ44, Մ45	
ԹԵՄԱ 4	
ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆԱՁԻԳԻՑ: ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐՔՆԵՐԸ	
Հիմնական նպատակը	
Ձևավորել՝	

1. -պատկերացումներ հրաձգության կանոնների տիրապետման վերաբերյալ,
2. -պատկերացումներ հրաձգության ժամանակ ինքնաձիգի հնարավոր խափանումների և դրանք տեղում վերացնելու վերաբերյալ:

ինքնաձիգից օգվելու կարողություններ՝ նախնական հրաձգության վարժություններ կատարելու համար:

Վերջնարդյունքներ

1.*Ներկայացնի* անվտանգության կանոնները հրաձգության ժամանակ:
2.*Ծանոթանա* հրաձգության կանոններին:
3.*Լիցքավորի* փամփշտատուփը:
4. *Ընդունի* ինքնաձիգից կրակ վարելու հիմնական դիրքը:
4.*Ճիշտ նշանառությամբ կրակ վարի.* անշարժ (շարժվող) նշանակետի վրա:
5.*Ստուգի և վերացնի* ինքնաձիգից հրաձգության ժամանակ ի հայտ եկած խափանումները :

Բովանդակություն

1.Ինքնաձիգից հրաձգության կանոնների ներկայացումը:
2.Ինքնաձիգի հնարավոր խափանումները հրաձգության ժամանակ և դրանց վերացման եղանակները:
3.Ինքնաձիգից գործնական հրաձգության վարումը.
անվտանգության կանոնների հրահանգավորումը,
նորմացույցների կատարումը (ինքնաձիգից կրակ վարելու դիրքը, ճիշտ նշանառության կատարումը, փամփուշտների լիցքավորման կարգը),
հրաձգության վարումը անշարժ թիրախի վրա:

Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Դասարանին ներկայացնում են հրաձգության ժամանակ անվտանգության կանոնները: Լիցքավորում են փամփշտատուփը:Ընդունում են ինքնաձիգից կրակ վարելու դիրքը: Կատարում են ճիշտ նշանառության վարժանք:Վարում են հրաձգություն անշարժ թիրախի վրա:Վերացնում են ինքնաձիգի պայմանական խափանումը:	**Կառուցվածք և գործառույթ** Ինքնաձիգից կրակ վարելու դիրք: Ճիշտ նշանառությամբ հրաձգության վարում:

Միջառարկայական կապեր

Ֆիզկուլտուրա: Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկունություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա: Նախավարժանք, շնչառական վարժանքներ:
Կենսաբանություն: Մարմնի անատոմիա՝ հենաշարժիչ, մկանաջլային, շնչառական համակարգեր, հավասարակշռության և շարժումների կոորդինացիայի կենտրոններ (ներքին ականջ, ուղեղիկ):
Ֆիզիկա: Հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա: Կայունություն, ծանրության կենտրոն: Իներցիա: Պտտական շարժում: Աչքի ֆոկուս: Հետհարվածի դիմակայում:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ

Մ5, Մ33, Մ44, Մ45

ԹԵՄԱ 4	
ՁԵՌՔԻ ԲԵԿՈՐԱՅԻՆ ՆՌՆԱԿՆԵՐ	
Հիմնական նպատակը	
1. Կարևորել՝ ձեռքի բեկորային Փ-1, ՐԳՕ (պաշտպանողական), Ջ-1,ՐԳ-42, ՐԳԴ-5 և ՐԳՀ (հարձակողական) նռնակների կիրառման նշանակությունը Ծանոթացնել բեկորային նռնակների մարտավարատեխնիկական բնուլթագրերին ձևավորել՝ 2. պատկերացում բեկորային նռնակների կառուցվածքի, մեխանիզմի աշխատանքի սկզբունքի վերաբերյալ, իմանալ 3. բեկորային նռնակների հետ վարվելու անվտանգության կանոնները, տեղափոխման կարգը: տիրապետել ձեռքի բեկորային նռնակների նետման եղանակներին ու կանոններին:	
Վերջնարդյունքներ	
1. *Ներկայացնի* ձեռքի բեկորային Փ-1, ՐԳՕ (պաշտպանողական), Ջ-1, ՐԳ-42, ՐԳԴ-5 և ՐԳՀ (հարձակողական) նռնակների նշանակությունը, մարտավարատեխնիկական բնութագրերը: 2. *Ցուցադրի (նկարագրի)* ձեռքի բեկորային նռնակների կառուցվածքը: 3. *Գիտենա* ձեռքի բեկորային նռնակների հետ վարվելու անվտանգության կանոնները, տեղափոխման կարգը: 4.*Ճիշտ նետի* ձեռքի ուսումնական նռնակը տարբեր դիրքերից (խրամատից, կանգնած, պառկած) :	
Բովանդակություն	
1.Ձեռքի բեկորային Փ-1, ՐԳՕ (պաշտպանողական), Ջ-1, ՐԳ-42, ՐԳԴ-5 և ՐԳՀ (հարձակողական) նռնակների նշանակության, մարտավարատեխնիկական բնութագրերի և կառուցվածքի ներկայացումը: 2. Ձեռքի բեկորային նռնակների հետ վարվելու անվտանգության կանոնները, տեղափոխման կարգի ներկայացումը, նետման եղանակներն ու կանոնները:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Տալիս են ձեռքի բեկորային նռնակների և նռնակը նետման համար պատրաստելու կարգի վերաբերյալ ընդհանուր տեղեկություն՝ ցուցադրումով, բացատրում են նռնակների և պայթուցիչի մասերի ու մեխանիզմների աշխատանքը: Ցուցադրում են նռնակի նետման ճիշտ տեխնիկան:	**Կառուցվածք և գործառույթ** Նռնակների և պայթուցիչի մասերն ու մեխանիզմները: Նռնակի նետման ճիշտ տեխնիկա:
Միջառարկայական կապեր	
Ֆիզկուլտուրա: Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկունություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա: Նախավարժանք, շնչառական վարժանքներ:Նռնակի նետում: **Կենսաբանություն:** Մարմնի անատոմիա՝ հենաշարժիչ, մկանաջլային, շնչառական համակարգեր, հավասարկշռության և շարժումների կոորդինացիայի կենտրոններ (ներքին ականջ, ուղեղիկ):	

Ֆիզիկա: Հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա: Կայունություն, ծանրության կենտրոն: Իներցիա: Պտտական շարժում: Անկյան տակ նետված մարմնի շարժում: Հետագծի գոյացում:
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ
Մ33, Մ44, Մ45
ԹԵՄԱ 5
ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՁԻՆԱՄԹԵՐՔ
Հիմնական նպատակը
Ճանաչել հակատանկային, հակահետևակային ականները, իմանալ դրանց նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը, հիմնական մարտավարա-տեխնիկական բնութագրերը: Իրազեկել ականների հետ վարվելու անվտանգության կանոնները: Ծանոթացնել՝ 1. - ինժեներական արգելափակոցների տեսակներին և նշանակությանը, **2.** - ականադաշտերի նախազգուշացման նշաններին:
Վերջնարդյունքներ
1.*Ճանաչի և տարբերի* հակահետևակային ՊՄՀ-1, ՊՄՀ-2, ՄՕՀ-50, հակատանկային ՏՄ57 (ՏՄ-62) ականները: 2.*Իմանա* ականների նշանակությունը, մարտավարա-տեխնիկական բնութագրերը, դրանց հետ վարվելու անվտանգության կանոնները: 3.*Նկարագրի* ականներից բխող վտանգները: 4. *Իմանա և կարևորի* ինժեներական արգելափակոցների, ականադաշտերի նշանակությունը առաջնագծի պաշտպանության համար: 5.*Նկարագրի* ականադաշտերի նախազգուշացման նշանները:

Բովանդակություն	
1.Հակատանկային և հակահետևակային ականների ներկայացումը՝ ընդհանուր կառուցվածքը, նշանակությունը, մարտավարա-տեխնիկական բնութագրերը, անվտանգության միջոցառումները: 2.Ինժեներական արգելափակոցներ՝ տեսակները, նշանակությունը: Ականադաշտեր: Ականադաշտերի նախազգուշացման նշանները:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Ինքնուրույն (խմբով) համացանցի միջոցով ուսումնասիրում են հակատանկային և հակահետևակային ականների վերաբերյալ նյութեր՝ դրանց կառուցվածքն ու գործողությունը: Համակարգում են դրանք և ներկայացնում դասարանին: Ներկայացնում (նկարում) են ականադաշտերի նախազգուշացման նշանները:	**Կառուվածք և գործառույթ** Ականների կառուցվածքն ու գործողությունը: Ականադաշտերի նախազգուշացման նշաններ:
Միջառարկայական կապեր	
Աշխարհագրություն: Բնագիտություն: Ռելիեֆ, տեղանքի տարատեսակներ: **Ֆիզիկա:** Պայթյուն առաջացնող նյութեր, անվտանգության կանոններ: **Քիմիա:** Քիմիական միացություններ:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ6, Մ14, Մ38, Մ45	
ԹԵՄԱ 6	
ՌԵԼԻԵՖ ԵՎ ԴՐԱ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԻ ՎՐԱ:	
Հիմնական նպատակը	
Ուսուցանել ռելիեֆի ձևերը և տեղագրական քարտեզների վրա դրանց պատկերման օրինաչափությունը: Գաղափար տալ բացարձակ և հարաբերական բարձրությունների մասին:	
Վերջնարդյունքներ	
1.*Գիտենա* ռելիեֆի ձևերը, հորիզոնականների միջոցով ռելիեֆի պատկերման էությունը: 2.Քարտեզի վրա *որոշի* կետերի բացարձակ և հարաբերական բարձրություններ, լանջերի թեքություններ:	
Բովանդակություն	
1.Ռելիեֆի ձևերը, հորիզոնականների միջոցով դրանց պատկերումը, բացարձակ և հարաբերական բարձրությունների ու լանջերի թեքությունների որոշումը:	

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող հասկացություններ
Որոշում են բացարձակ և հարաբերական բարձրություններ, լանջերի թեքություններ:	**Մասշտաբ, համամասնություն, քանակ** Բացարձակ և հարաբերական բարձրություններ, լանջերի թեքություններ:
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Ռազմական և մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ: **Բնագիտություն: Աշխարհագրություն**: Տեղանք, ռելիեֆ, տեղային առարկաներ, տեղագրական քարտեզներ, պայմանական նշաններ:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ3, Մ4, Մ45	
ԹԵՄԱ 7	
ԶԻՆՎՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ	
Հիմնական նպատակը	
Ձևավորել՝ 1. -պատկերացումներ լեռնային տեղանքի մարտավարական հատկանիշների վերաբերյալ՝ հարձակման և պաշտպանության տեսանկյունից: 2. -պատկերացումներ լեռնային խիստ պայմաններում գործելու նախապայմանների վերաբերյալ:	
Վերջնարդյունքներ	
1.*Նկարագրի* լեռնային ռելիեֆը, 2.*Ներկայացի* լեռնային տեղանքի մարտավարական հատկանիշները, 3.*Թվարկի* լեռնային վտանգները և դրանց նախապատրաստվելու ձևերը:	
Բովանդակություն	
1.Լեռներ: Լեռնային պայմանները: Լեռնային տեղանքի մարտավարական հատկանիշները: Նախապատրաստական աշխատանքներ. ֆիզիկական-հոգեբանական պատրաստություն, տեխնիկական պատրաստություն, փորձի ձեռքբերում, բարձր-լեռնային պայմաններին հարմարվելը, համապատասխան հանդերձանքով, սննդով ապահովումը:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Համացանցի միջոցով դիտում են տեսաֆիլմեր լեռնային զորքերի մասին: Համակարգում են դրանք և ներկայացնում դասարանին:	**Կայունություն և փոփոխություն** Լեռնային տեղանքի մարտավարական հատկանիշներ: **Պատճառ և հետևանք** Լեռնային վտանգները և դրանց նախապատրաստվելու ձևերը:
Միջառարկայական կապեր	
Ինֆորմատիկա: Համակարգիչ և համացանցի տեղեկատվական հենքեր, սահիկաշարեր: **Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ:	

Ռուսերեն (այլ օտար լեզու): Ուսումնասիրվող նյութի մասին օտար լեզվով տեղեկություն: **Բնագիտություն: Աշխարհագրություն:** Երկիր, տեղանք, լեռնային ռելիեֆ, տեղանքի օբյեկտներ կամ կողմնորոշիչներ, լեռնագագաթներ, սառցադաշտեր, տարածքի բնորոշ կլիման, օդի ճնշումը թթվածի պարունակությունը բարձր-լեռնային շրջանում, քամիները լեռներում, թթվածնային քաղց, լեռնագնացներ: **Կենսաբանություն:** Ֆիզիոլոգիան լեռներում. շնչառության համակարգ, թթվածնային քաղց, արյան շրջանառությունը և սրտի աշխատանքը լեռներում, շնչարգելություն, աշխատունակություն, արևհարություն, ցրտահարություն, ջրազրկում,: **Ֆիզիկա:** Մթնոլորտային ճնշում, լեռնային օպտիկա, կայծակ, խոնավություն, ջրի եռման աստիճանը ըստ բարձրության:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ1, Մ2, Մ14, Մ15, Մ38, Մ45	
ԹԵՄԱ 8	
ՀՀ ԶՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ	
Հիմնական նպատակը	
Ձևավորել պատկերացումներ բանակային ծառայության առանձնահատկությունների, բանակային կարգ ու կանոնի և զինծառայողի պատասխանատվության վերաբերյալ:	
Վերջնարդյունքներ	
1.*Ներկայացնի* ի՞նչ է պատասխանատվությունը և ինչ պատասխանատվություն է սպասվում զինծառայողին պետերի հրամանը չկատարելու (ոչ պատշաճ կատարելու) դեպքում:	
Բովանդակություն	
1.Զինծառայողի պատասխանատվության տեսակները: Պատասխանատվությունը հրամանը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Զինվորական ղեկավարի ուղղորդմամբ անհատապես ուսումնասիրում են «ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագրքի» զինծառայողի պատասխանատության վերաբերյալ նորմերը:	**Անհատ և հարաբերություններ** Պատասխանատություն: Հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը: **Պատճառ և հետևանք** Հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը / քրեական պատասխանատվություն:
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Ռազմական եզրույթների հայերեն համարժեքներ: **Հասարակագիտություն:** Հասարակական փոխհարաբերություններ: Իրավունքներ և պարտականություններ: Պատասխանատվություն: Քրեական և վարչական պատասխանատվություն: Զինվորական կարգապահություն:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ24, Մ32, Մ34, Մ38	

ԹԵՄԱ 8	
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ (ՄՄԻ). ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ	
Հիմնական նպատակը	
Ձևավորել՝ 1. -պատկերացումներ իրավական և բարոյական տեսանկյունից ընդհարումների ժամանակ մարտադաշտում հայտնված որոշ կատեգորիայի մարդկանց նկատմամբ ճիշտ դիրքորոշումներ ընդունելու վերաբերյալ: 2. -պատկերացումներ հակառակորդի քաղաքացիական բնակչության և ռազմագերիների հետ վարվելու կարգի վերաբերյալ:	
Վերջնարդյունքներ	
1.*Ներկայացի* հակառակորդի քաղաքացիական բնակչության, ռազմագերիների իրավունքները և դրանց խախտման դեպքում սպասվող իրավական հետևանքները:	
Բովանդակություն	
1.Միջազգային մարդասիրական իրավունք (ՄՄԻ). Պատերազմի ժամանակ հակառակորդի քաղաքացիական բնակչության և ռազմագերիների հետ վարվելու կարգը:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Հանդիպում ՀՀ ԿԽՄԿ ներկայացուցչի հետ. զրույց առաջադրված թեմայով:	**Համաշխարհայնացում** Միջազգային մարդասիրական իրավունք

Միջառարկայական կապեր
Հայոց լեզու: Ռազմական և մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ: **Հասարակագիտություն:** Միջազգային իրավունք:
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ
Մ18, Մ23, Մ32, Մ35, Մ39, Մ45

ԹԵՄԱ 9	
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՈՂՋՈՒՅՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԱՌԱՆՑ ԶԵՆՔԻ՝ ՏԵՂՈՒՄ ԵՎ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ	
Հիմնական նպատակը	
Ձևավորել Շարային կանոնադրության նորմը: Նպաստել՝ զինվորական ողջույնի ճիշտ կատարման հմտություններին. տեղում և շարժման ընթացքում:	
Վերջնարդյունքներ	
1. *Կատարի* «զինվորական ողջույն» տեղում և շարժման ընթացքում՝ շարային կանոնադրության պահանջների համաձայն:	
Բովանդակություն	
1.Զինվորական ողջույնի կատարումը առանց զենքի. - տեղում, -շարժման ընթացքում:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Ցուցադրել շարային վարժաձևերը այս թեմայից՝ -տեղում առանց զենքի զինվորական ողջույնի կատարումը, -շարժման ընթացքում առանց զենքի զինվորական ողջույնի կատարումը:	**Անհատ և հարաբերություններ** Զինվորական բարեկրթություն. Պետեր և ենթականեր, ավագներ և կրտսերներ:
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Ռազմական եզրույթների հայերեն համարժեքներ: **Ֆիզկուլտուրա:** Շարային պատրաստության վարժաձևեր. շարային քայլ, վազք, շարային կեցվածք:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ38, Մ45	
ԹԵՄԱ 10	
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԵՐԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ: ՀՈՒՅԶԵՐ, ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	
Հիմնական նպատակը	
Ձևավորել՝ - ուշադրությունը՝ որպես զինվորական գործունեություն ծավալելու կարևոր նախապայման- -պատկերացումներ հուզերի մասին՝ ճանաչեն մարդու բազային հույզերը և դրանց ազդեցությունը զիվորական գործունեության վրա. մասնավորապես մարտական խնդիր կատարելիս: - տարբերակեն ուշադրության տեսակները և դրանց դերը զինվորական գործունեության մեջ:	
Վերջնարդյունքներ	
1.*Պատկերացում ունենա* ուշադրություն հասկացության մասին, *տարբերակի* ուշադրության հիմնական տեսակները և ազդեցությունը զինվորական ծառայության վրա: *Տիրապետի* ուշադրությունը կենտրոնացնելու որոշակի հոգեբանական մեխանիզմների:	

2. Ընդհանուր *պատկերացում կազմի* հույզերի վերաբերյալ, *տարանջատի* հույզերը և դրանց արտահայտման ձևերը, ինչպես նաև ազդեցությունը զինվորական գործունեության վրա:	
Բովանդակություն	
1. Ուշադրություն, տեսակները: 2. Հույզեր, զգացմունքներ:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Զրույց զինվորական հոգեբանի հետ:	**Կայունություն և փոփոխություն** Զինվորի հոգեվիճակի կայունությունը /Կենտրոնացվածություն: Բաշխում: Տեղափոխելիություն: Օրգանիզմի ուժերի մոբիլիզացիա/ բերում է դրական / բացասական/ փոփոխությունների: **Անհատ և հարաբերություններ** Հրամանատար /հոգեբան/ զինվոր համագործակցություն /զրույց, հույզեր, ապրումակցում և այլն/: **Անհատական և մշակութային արժեհամակարգ** Զինվորի՝ իր մշակութային փորձի փոխամցումը մյուսներին / երգ, պար, կիթառ, շեփոր և այլն/:
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Ռազմական և մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ: **Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն: Հասարակագիտություն:** Տարբեր ժամանակների պատերազմների պատմությունը. մարդկային կորուստներ և տառապանքներ:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ31, Մ32, Մ34, Մ36, Մ37, Մ45	
ԹԵՄԱ 11	
ՏԵԽՆԱԾԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ:	
Հիմնական նպատակը	
Արագ և ճիշտ արձագանքել ստեղծված արտակարգ իրավիճակին, մնալ կենդանի և անվնաս:	
Վերջնարդյունքներ	
1.*Կիրառի* հատուկ օբյեկտներում ծագած տեխնածին արտակարգ իրավիճակներում վարքի կանոնները:	

2.*Պատկերացնի* զանգվածային և ոչ ընտրողական ոչնչացման զինմիջոցների գործադրման դեպքում առաջ եկած սպառնալիքները և *ներկայացնի* պաշտպանության ձևերը:	
Բովանդակություն	
1.Հրդեհներ և պայթյուններ: Հիդրոդինամիկական վթարներ: Վթարներ ուժեղ ներգործող թունավոր և ռադիոակտիվ նյութերի արտանետումով: Վարքի կանոնները: 2.Միջուկային, քիմիական, կենսաբանական, երկրաֆիզիկական զենքեր: Վակուումային և թերմոբար զենքեր: Պաշտպանության ձևերը:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Դիտում են տեսաֆիլմ՝ հատուկ օբյեկտներում տեխնածին արտակարգ իրավիճակների վերաբերյալ: Կազմակերպում են քննարկում: Դպրոցում իրականացնում են ուսումնական տարահանում ՝ պայմանավորված հրդեհների, պայթյունների, հիդրոդինամիկական վթարների սցենարներով: Ստանում են նախնական հրահանգավորում. գործառույթների բաշխում, տարահանում, արդյունքների վերլուծում և առաջնորդվում են ըստ կարգի ու համապատասխան ցուցումների:	**Օրինաչափություն** Հատուկ օբյեկտներում տեխնածին արտակարգ իրավիճակներ: **Պատճառ և հետևանք** Հրդեհներ, պայթյուններ, հիդրոդինամիկական վթարներ: Ֆիզիկական և նյութական կորուստ:
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ: **Ֆիզիկա:** Էլեկտրական հոսանք: Ամրություն: Ռադիացիա, ատոմային էներգիա, ատոմակայաններ: Ջերմամիջուկային ռեակցիա: Ատոմային զենք: **Քիմիա:** Քիմիական ակտիվ, թունավոր նյութեր, քլոր: Ծանր մետաղներ: Քիմիական զենք: **Կենսաբանություն:** Քիմիական և ջերմային այրվածքներ, պաշտպանությունը: Վիրուսներ: Կենսաբանական զենք:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ38, Մ43, Մ45	
ԹԵՄԱ 11	
ԿԵՆՍԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ. ԲՆԱԿԱՏԵՂԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ՏԵՂԱՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ	
Հիմնական նպատակը	
Նպաստել արտակարգ իրավիճակներում օրգանիզմի կենսապահովման պահպանումը ՝ բնակատեղի ձևավորման և դրա քողարկման շնորհիվ: Ուսուցանել ստեղծված արտակարգ իրավիճակներում արագ և ճիշտ արձագանքումը, կենդանի և անվնաս մնալը:	
Վերջնարդյունքներ	
1.*Գիտի* հատուկ օբյեկտներում ծագած տեխնածին արտակարգ իրավիճակներում վարքի կանոնները: 2.*Գիտակցի* զանգվածային և ոչ ընտրողական ոչնչացման զինմիջոցների գործադրման դեպքում առաջ եկած սպառնալիքները: 3. *Գիտի* պաշտպանության ձևերը:	

4. *Գիտի* տեղանքում առկա միջոցներով բնակատեղի ձեվավորման եվ քողարկման կարգը:	
Բովանդակություն	
1.Բնակատեղի ձևավորումը և քողարկումը տեղանքում առկա միջոցներով:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Դիտում են տեսաֆիլմ՝ հատուկ օբյեկտներում տեխնածին արտակարգ իրավիճակների վերաբերյալ և կազմակերպում քննարկում: Դպրոցում իրականացնում են ուսումնական տարհանում ՝ պայմանավորված հատուկ օբյեկտներում ծագած տեխնածին արտակարգ իրավիճակների, զանգվածային և ոչ ընտրողական ոչնչացման զինմիջոցների գործադրման դեպքում առաջ եկած սպառնալիքների սցենարներով: Ստանում են նախնական հրահանգավորում. գործառույթների բաշխում, տարհանում, արդյունքների վերլուծում և առաջնորդվում են ըստ կարգի ու համապատասխան ցուցումների: Տեղանքում առկա միջոցներով ձևավորում են բնակատեղի և քողարկում այլն:	**Պատճառ և հետևանք** Հատուկ օբյեկտներում տեխնածին արտակարգ իրավիճակներ: Զանգվածային և ոչ ընտրողական ոչնչացման զինմիջոցներ: Բնակատեղի ձևավորում և քողարկում:
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ: **Ֆիզիկա:** Էլեկտրական հոսանք, ամրություն, ռադիացիա, ատոմային էներգիա, ատոմակայաններ, ջերմամիջուկային ռեակցիա, ատոմային զենք: **Քիմիա:** Քիմիական ակտիվ, թունավոր նյութեր, քլոր, ծանր մետաղներ և քիմիական զենք: **Կենսաբանություն:** Քիմիական, ջերմային այրվածքներ: Վիրուսներ: Կենսաբանական զենք:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ38, Մ43, Մ45	

ԹԵՄԱ 12	
ՎԵՐՔԵՐ ԵՎ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ	
Հիմնական նպատակը	
Հաղորդել -վերքերի վերաբերյալ տեղեկություն. սահմանումը, տեսակները (կտրած, ծակած, կծած, հրազենային, անդամահատված, օտար մարմնով վերքեր և այլն), առաջացման մեխանիզմները, նշանները, վտանգը, և առաջին օգնության հիմունքները, -վնասվածքների վերաբերյալ. ձևերը և տեսակները, -առաջին օգնության ցուցաբերման, տուժածների տարահանման և տեղափոխման հիմունքները և անհրաժեշտ միջոցները:	
Վերջնարդյունքներ	
1.*Կատարի* տուժածների զննումը, արագ *կողմնորոշվի* տուժածի վիճակում: *Կատարի* տուժածների տեսակավորում: 2.*Կազմակերպի* առաջին օգնությունը տարբեր վերքերի դեպքում: 3.*Ճիշտ ներկայացնի* վնասող ազդակի ազդեցության վերացման եղանակները, վնասված հյուսվածքի առաջնային մշակումը: 4.*Իրականացնի* տարբեր մարմնամասերում առկա օտար մարմնի անշարժացումը ձեռքի տակ եղած միջոցներով: 5.*Իրականացնի* առաջին օգնության ցուցաբերումը, տուժածների տարահանումը և տեղափոխումը:	
Բովանդակություն	
1.Վնասվածքների տեսակները: Վերքեր: Լարան: Վիրակապական նյութեր և միջոցներ: Վերքի մշակումը և վիրակապում: Վերքի ախտահանման նյութեր և միջոցներ:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Իրավիճակի մոդելավորում և հրատապ գործողությունների փուլերի խաղարկում դասարանում:	**Նյութ, էներգիա** Լարան: Վիրակապական նյութեր և միջոցներ:
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ: **Կենսաբանություն:** Մարմնի անատոմիա՝ մկանային համակարգ, վնասվածքներ և վերքեր, արյունատար համակարգ, արյունահոսություն: **Քիմիա:** Քիմիական նյութերին՝ ջրածնի պերօքսիդ, յոդ և դրանց կիրառման կարգին:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ	
Մ25, Մ38, Մ43, Մ45	

ԹԵՄԱ 12	
ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՎՆԱՍՎԱԾՔԱՅԻՆ ՇՈԿ	
Հիմնական նպատակը	
Հաղորդել տեղեկություն - արյունահոսության տեսակների, առաջացման պատճառների, հիմնական ախտանիշների, ծանրության աստիճանների վերաբերյալ, -արյունահոսությունների ժամանակ առաջին օգնության ցուցաբերման հիմունքների վերաբերյալ, -վնասվածքային շոկի, նրա տեսակների, առաջացման պատճառների և ցուցաբերվող առաջին օգնության վերաբերյալ:	
Վերջնարդյունքներ	
1.*Իրականացնի* տուժածի զննումը, արագ *որոշի* արյունահոսության տեսակը, առաջացման պատճառը, ծանրության աստիճանը: 2.*Տիրապետի* արտաքին արյունահոսությունների ժամանակավոր դադարեցմանը ձեռքի տակ եղած և հաշվեցուցակային միջոցներով (ճնշող վիրակապ, առավելագույն տարածում և ծալում, սեղման կետեր, լարան, ոլորան և այլն): 3.Կ*ողմնորոշվի* ներքին արյունահոսության դեպքում և *ցուցաբերի* առաջին օգնություն: 4.*Որոշի* քթային արյունահոսության տեսակը և *ցուցաբերի* առաջին օգնություն: 5. *Ցուցաբերի* անհետաձգելի օգնություն արյունահոսությունների ժամանակ և *իրականացնի* արյունահոսություններով տուժածի խնամքը: 6.*Տարբերակի* շոկերը, *ճանաչի* նշանները, և *ընտրի* առաջին օգնության ցուցաբերման հերթականությունը, ելնելով հայտնաբերած վնասվածքներից և տուժածի ծանրության աստիճանից:	
Բովանդակություն	
1.Արյունահոսություններ՝ - արտաքին արյունահոսություն, - արյունահոսություն խոշոր զարկերակից, - քթային արյունահոսություն, - ներքին արյունահոսություն: 2. Վնասվածքային շոկ:	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Կատարում են պայմանական տուժածի արյունահոսության դադարեցում սեղմման, ճնշող վիրակապի և լարանի օգնությամբ: Տեսակավորում և տարահանում են արյունահոսող տուժածին: Կատարում են շոկի կանխարգելման, զարգացման և նվազեցման ուղղությամբ տարվող քայլերը: Որոշում են վնասվածքային շոկի ծանրության աստիճանը:	**Պատճառ հետևանք** Արյունահոսություն: Շոկ: **Կայունություն և փոփոխություն** Արյունահոսության դադարեցում, տեսակավորում: Շոկի կանխարգելում:
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու: Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ: **Կենսաբանություն:** Մարմնի անատոմիա, արյունատար համակարգ, արյունահոսություն և մարդու նյարդային համակարգ:	

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ
Մ32, Մ38, Մ43, Մ45
ԹԵՄԱ 12
ԽԱՅԹՈՑՆԵՐ ԵՎ ԿԾԱԾ ՎԵՐՔԵՐ (ՕՃ, ԿԱՐԻՃ, ԿՐԵՏ, ՄԵՂՈՒ, ՇՈՒՆ, ԳԱՅԼ ԵՎ ԱՅԼՆ): ԱԼԵՐԳԻԿ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ: ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ:
Հիմնական նպատակը
Հաղորդել տեղեկություն՝ -կենցաղային էթիլ և մեթիլ սպիրտի, էթիլեն գլիկոլի (անտիֆրիզ), նավթամթերքների (բենզինի գոլորշիներ, կերոսին), շմոլ գազի (ածխածնի մոնօքսիդ), բոտուլիզմի թունավորումների վերաբերյալ: տեղեկացնել՝ օձերի և թունավոր միջատների խայթոցների վերաբերյալ:
Վերջնարդյունքներ
1.*Իրականացնի* անհետաձգելի օգնություն կենցաղային թունավորումների, օձերի և թունավոր միջատների խայթոցների դեպքում:
Բովանդակություն
1.Կենցաղային թունավորումներ:Խայթոցներ և կծած վերքեր (օձ, կարիճ, կրետ, մեղու, շուն, գայլ և այլն): Ալերգիկ ռեակցիաներ: Նախազգուշական միջոցառումները:

Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
Համացանցի միջոցով դիտում են կենցաղային թունավորումների, խայթոցների և կծած վերքերի մասին նյութեր՝ համակարգում են դրանք, ներկայացնում դասարանին և կատարում քննարկում: Կատարում են պայմանական տուժածի անհետաձգելի օգնության կազմակերպում:	**Պատճառ և հետևանք** Իրազեկված /պաշտպանված/ նախազգուշական միջոցառումներ: **Նյութ, էներգիա** Քիմիական նյութերից /միացություններից/ թունավորումներ, ալերգիկ ռեակցիաներ:

Միջառարկայական կապեր
Ինֆորմատիկա: Համակարգ , համացանցի տեղեկատվական հենքեր, սահիկաշարեր: **Հայոց լեզու:** Մասնագիտական եզրույթների հայերեն համարժեքներ: **Կենսաբանություն:** Թունավոր կենդանիներ: Թունավորումներ և ալերգիկ ռեակցիաներ:
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների հետ
Մ14, Մ15, Մ32, Մ38, Մ43, Մ45